

«ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԵԱՆ ԳԱՆՁԱՆԱԿԻՆ»

Posted on November 5, 2015 by Keghart



Category: [Opinions](#)



✖ Դկ. Տ. Ներսես առաջ քին. Ներսեսեան, Առաջ աւանդապահ Բրիտանական գրադարանում 1975-2012թ, 5 Նոյեմբեր 2015

Որեւէ մէկը, որ դոյզն չափով տեղեակ է, թէ ինչպէս են թանգարանները, գրադարանները եւ պատկերասրահները հարստացնում եւ համալրում իրենց մշակութային գանձերը, պիտի զգուշանար տեսակետ յայտնելու Չէյթոնի Աւետարանի Ջ. Պոլ Գետտի (J. Paul Getty) թանգարանի սեփականութիւնը դարձած պատառիկների վերականգման փորձի մասին (Ոսկան Մխիթարեան, «[Մենք ենք մեր գանձերուն իրաւատէրը](#)», 1 Նոյեմբեր 1015թ.): Մշակութային գանձերը սեփականութիւնը չեն միայն դրանց ստեղծողների, այլ մաս են կազմում մարդկային քաղաքակրթութեան «գանձարանի», եւ բախտաւոր է այն ազգը եւ ժողովուրդը, որ իր լուման է ներդրել այդ «գանձանակի» մէջ:

✖
Թանգարանների հավաքածուները հարստանում են բազմաթիւ միջոցներով.

- Ա.Նուիրատուութեամբ
- Բ. Գնումներով
- Գ. Մշակութային գանձերի գրաւում պետութեան կողմից՝ ի դիմաց մահուան տուրքի (Death duty) կամ նուիրատուութիւն՝ փոխան մահուան տուրքի
- Դ. Պատերազմական աւար
- Ե. Մշտական պարտքով (Permanent Loan)

✖ Դկ. Տ. Ներսես առաջ քին. Ներսեսեան, Առաջ աւանդապահ Բրիտանական գրադարանում 1975-2012թ, 5 Նոյեմբեր 2015

Որեւէ մէկը, որ դոյզն չափով տեղեակ է, թէ ինչպէս են թանգարանները, գրադարանները եւ պատկերասրահները հարստացնում եւ համալրում իրենց մշակութային գանձերը, պիտի զգուշանար տեսակետ յայտնելու Չէյթոնի Աւետարանի Ջ. Պոլ Գետտի (J. Paul Getty) թանգարանի սեփականութիւնը դարձած պատառիկների վերականգման փորձի մասին (Ոսկան Մխիթարեան, «[Մենք ենք մեր գանձերուն իրաւատէրը](#)», 1 Նոյեմբեր 1015թ.): Մշակութային գանձերը սեփականութիւնը չեն միայն դրանց ստեղծողների, այլ մաս են կազմում մարդկային քաղաքակրթութեան «գանձարանի», եւ բախտաւոր է այն ազգը եւ ժողովուրդը, որ իր լուման է ներդրել այդ «գանձանակի» մէջ:

✖
Թանգարանների հավաքածուները հարստանում են բազմաթիւ միջոցներով.

- Ա.Նուիրատուութեամբ
- Բ. Գնումներով
- Գ. Մշակութային գանձերի գրաւում պետութեան կողմից՝ ի դիմաց մահուան տուրքի (Death duty) կամ նուիրատուութիւն՝ փոխան մահուան տուրքի

Դ. Պատերազմական աւար Ե. Մշտական պարտքով (Permanent Loan)

Այս հիմնական միջոցներով են թանգարանները եւ գրադարանները հարստացնում իրենց ունեցուածքը եւ հետեւաբար ասել, որ Չէյթունի պատառիկների վերադարձը ձախողուեց, որովհետեւ հարցը «լուրջ ու մանրագլին փնտռուքի, հետազոտութեան եւ վերլուծումի կը կարօտի», սխալ մեկնակետ է: Ոչ մի թանգարան եւ գրադարան մինչեւ այսօր իր հավաքածոյից ոչ մի իր չի վերադարձրել իր «իրաւատերին»:

Բրիտանական Գրադարանի ձեռագրային հավաքածոյին մեր պաշտօնավարութեան ընթացքին աւելացրել ենք աւելի քան 92 բացառիկ ձեռագրային նմոյշներ՝ բոլորը գնուած աճուրդային վաճառքներից: Այստեղ համառօտաբար տամ անունները այն անհատների, որոնց ձեռագրերը վաճառքի են հանուել հաստատութեան կամ ժառանգների կողմից.

- Ասպետ Տօնապետեան
- Արտաշես Տէր Խաչատրեան (47 ձեռագիր)
- Յակոբ Գեորգեան (Hagop Kevorkian Fund, որի հայկական ձեռագրերի վաճառքն սկսուեց 1967 թ. եւ տեւեց մինչեւ 1985թ. (ԱՄՆ)
- Յարութիւն Հազարեան (ԱՄՆ)
- Յովսէփ Փուշման (ԱՄՆ)
- Նազարէթ Ադամեան (Watertown) Չէյթունի աւետարանի պատառիկների տերը՝ Նախքան դրանց վաճառքը Ջ.Պոլ Գետտիի գրադարան-թանգարանին (ԱՄՆ)
- Ռուբէն Տէր Արութիւնեան (ԱՄՆ)
- Տիգրան Խան Քելեկեան
- Ֆրեդերիկ Ֆեյրիի .

Այս պատկառելի հավաքածոները վաճառքի հանուեցին հաւաքողների ժառանգների կողմից: Յակոբ Գեորգեանի հավաքածոյից Բրիտանական գրադարանի հավաքածոյի թագն ու պսակն է **Աւագ վանքի աւետարանը** (Or.13654), որը Նախկինում մաս է կազմել Ղալաթայի Ազգային գրադարանի: Յակոբ Գեորգեանի հավաքածոյին էր պատկանում նաեւ Լեւոն Գ. թագաւորի ժամագիրքը (1269-89)՝ այժմ Բրիտանական Գրադարանի Ձեռագիր համար Or.13993): Այս ձեռագրի նկարագրութիւնն, ինչպէս վերոյիշեալ հավաքածոների նկարագրութիւններն ու գնահատումները, ինձ էին վստահուած: Վերջին ձեռագրի նկարագրութեան օրերին Լոնդոն էր գտնուում մի մեծահարուստ հայ (այժմ հանգուցեալ): Օգտուելով առիթից, ձեռագիրը տարայ հիւրանոց ցոյց տալու նրան՝ մտածելով, որ նկատի ունենալով ձեռագրի պատմական եւ գեղագիտական (գրիչը եւ մանրանկարիչը Սարգիս Պիծակ) արժէքը, պիտի խանդավառուի եւ գնի: Մեծ հիասթափութիւն էր, երբ առանց ձեռագրին Նայելու եւ ինձ առիթ տալու բացատրել ձեռագրի կարեւորութիւնը, անմիջապէս տուեց իր վճիռը՝ «կազմերը լաւ վիճակի մէջ չեն»:

Վստահ եմ շատ հայեր յիշում են 14 Մարտ, 1967 թուականի Երեքշաբթի օրը, երբ

Sotheby's & Co ընկերութիւնը հրատարակեց Օքսֆորդի Գալուստ Կիւպէնկեան Հայագիտութեան Պրոֆեսոր Չարլզ Դաուսէթի պատրաստած Twenty-three important Armenian illuminated Manuscripts կայանալիք աճուրդի ցուցակը: Սա ծրագրուած վաճառքն էր Երուսաղէմի Սուրբ Յակոբեանց վանքից գողացուած 23 ամենաընտիր ձեռագրերի, որոնց մէջ առաջին եւ երկրորդ համարներն էին կրում Թորոս Ռոսլինի կողմից մանրանկարուած 1262թ. Չորս Ավետարանը եւ նաեւ Հեթում թագաւորի աւետարանը՝ մանրանկարուած Հռոմկլայում 1268/69թ.: Հեղինակիս սեփականութիւնն է սոյն տպագրուած ցուցակի 'Galley proofs'-ը, որտեղ իւրաքանչիւր ձեռագրի տակ մանր գրերով կան Բրիտանական թագարանի (Բրիտանական գրադարանը դեռ չկար որպէս առանձին հաստատութիւն) տնօրէնի ծանօթագրութիւնները՝ թելադրելով Թանգարանի ինստիտուտներէն փորձել գնել բոլոր ձեռագրերը՝ նշանակուած գումարների սահմաններում: Ծանօթագրութիւնները եւ գնահատականները չափազանց հետաքրքրական են եւ շատ տարբեր այն հայ բարերարից, որը որոշեց մի ակնթարթում մերժել պատեհութիւնը ձեռք բերելու ազգային մշակոյթի մի գանձ: Հայ ձեռագրական երկու խոշոր մասնագէտների, յանձինս Պրոֆ. Ս. Տէր Լեւոնեանի եւ Ակադէմիկոս Լեւոն Խաչիկեանի, աճուրդի ցուցակը տեսնելուն պէս ահագանգ հնչեցրին եւ երջանկայիշատակ Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի միջնորդութեամբ կասեցրին աճուրդը: Դատավարական բոլոր քանքերը՝ Sotheby's ընկերութիւնից իմանալու անունը այն անձնաւորութեան, որ ձեռագրերը յանձնել էր աճուրդին, անցան ապարդիւն: Աճուրդի Ընկերութիւնը ընդունեց, որ ձեռագրերը պատկանում են Երուսաղէմի Միաբանութեանը, բայց Ընկերութիւնը պահպանելով իր 'Vendor Secrecy' օրէնքը, չբացայայտեց ձեռագրերը գողացողի կամ գողացողների ինքնութիւնները: Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը 500,000 անգլիական ֆունտ ստեռլինգ վճարելով կասեցրեց աճուրդը եւ ձեռագրերը վերադարձրեց Սուրբ Երուսաղէմ: Երուսաղէմ վերադարձնելու հիմնական պատճառներից մէկն էլ այն էր, որ Իսրայելեան կառավարութիւնը դրանք համարում էր իր պետական հարստութիւնը: Ոչ ոք ժամանակին չհարցաքննեց Իսրայելեան կառավարութեանը, որ եթէ դրանք իր երկրի պետական հարստութեան մասն են, ապա ինչպէս պատահեց, որ 23 ձեռագիր յայտնուեցին Լոնդոնում՝ առանց պետութեան իմացութեան: Ինչպէս գիտենք, ձեռագրերի վերադարձից յետոյ, 1975թ. հանգուցեալ Եղիշէ Պատրիարք Տէրտերեանը վաճառքի հանուած Թորոս Ռոսլինի ձեռագրերից մէկը նուիրեց Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսին եւ նա էլ իր հերթին նուիրեց Երեւանի Մաշտոցի անուան Մատենադարանին (Երուսաղէմի նախկին No 3627-ը դարձաւ Երեւանի Մատենադարան No 10675 համար ձեռագիրը):

Հեղինակի տեսակետը, որ Թուրք կառավարութիւնը «Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցին աւելի լաւ կրնայ հոգ տանիլ, քան Պոլսոյ Պատրիարքութիւնը» արտայայտութիւնը ամբոխավարութիւն է, ճիշտ այնպէս, ինչպէ՞ս Ջ. Պոլ Գետտիի թանգարանից պահանջել Չէյթունի աւետարանի պատառիկները: Աղթամարի Ս. Խաչ վանքը այսօր գտնուում է

Թրքական հողի վրայ եւ հետեւաբար համարւում է թուրք պետութեան սեփականութիւնը, ճիշտ այնպէս, ինչպէս Սուրբ Այա Սոֆիայի Մայր տաճարը Կ. Պոլսում: Աղթամարը կը մնայ թրքական սեփականութիւն մինչեւ այն օրը, երբ կղզին կը դառնայ Մայր Հայաստանի մի մասը, թէեւ սրանից չի կարելի հետեւցնել, որ յոյներն էլ կարող են հետ պահանջել Այա Սոֆիան կամ Պարթենոն տաճարի՝ Բրիտանական Թանգարանում տեղաւորուած մասունքները, որի իրաւական տերն էր Լորդ Էլզինը՝ Նախքան դրանց փոխանցումը թանգարանին: Բրիտանական Թանգարանի Ուրարտական սրահի ցուցանմուշների մէջ կան երկու կարմիր կաւէ կուժեր, որոնք նուիրել է Էրմիտաժ թանգարանի տնօրէն Պիոտրովսկին կամ Գառնի տաճարի մի խոյակը, որը նուիրատուութիւնն է Կապիտան Ջ. Բուկանտեն Տելլֆերի (տես՝ Դկ. Տ. Ներսէս (Վրէժ) Ներսէսեանի, «Հայաստանը Բրիտանական Թանգարանում», «Գիտութիւն»՝ ՀՀ Գիտութիւնների ազգային ակադեմիայի թերթ, Դեկտեմբեր 12 (2009),1-5):

Հեղինակի այն յայտարարութիւնը, որ մի թանգարան չի կարող սեփականատերը դառնալ օտար «ազգային մշակոյթի հարստութեան», չափազանց տղայական միտք է: Թանգարանը սեփականատերն է առարկայի, բայց ոչ մշակոյթի: Երկրագնդի վրայ չկա մի թանգարան կամ գրադարան, որի հավաքածուները չկազմեն մասնիկները քաղաքակրթութեան՝ ստեղծուած տարբեր ազգերի եւ ժողովուրդների կողմից: Մի պահ պատկերացրէք, եթէ ամէն ազգ կամ ժողովուրդ պահանջի իրեն պատկանող մասունքի վերադարձը, ապա ոչ մի հաստատութիւն չի կարող շարունակել իր առաքելութիւնը որպէս մարդկային մտքի եւ տաղանդի ստեղծագործութեան պահապանը եւ դաստիարակիչը: Թանգարանների եւ գրադարանների մէջ պահուած մշակութային նմուշները «**յիշատակարաններն**» են այն ժողովուրդների, որոնք ստեղծիչներն են եղել, եւ որոնք ներկայացնում են իրենց ներդրումը համաշխարհային մշակոյթի «գանձանակի» մեջ:

Չէյթունի Սուրբ Աստուածածին եկեղեցու Աւետարանը՝ ընդօրինակուած Հռոմկլայում,1256թ., նկարագարողել է Թորոս Ռոսլինը՝ Կոստանդին Ա. Բարձրբերդցի կաթողիկոսի պատուէրով, որն այժմ գտնւում է Երեւանի Մաշտոցի անուան մատենադարանում (ձեռ.№.10450): Չէյթունի Աւետարանի մասին գրել են Մեսրոպ Եպսկ. Տէր-Մովսէսեանը (1913թ), Արտաւազդ Արք. Սիւրմէեանը (1936թ), Գարեգին Արք. Յովսէփեանցը (1943 թ), Պրոֆ. Ս. Տէր-Ներսէսեանը (1952 թ): Մայիսի 4-ից Օգոստոս 7 եւ 18 Օգոստոսից 23 Հոկտեմբեր 1994 թուականներին Չէյթունի Աւետարանի ութ խորանները ցուցադրւում են *Treasures in Heaven: Armenain Illuminated Manuscripts* ցուցահանդեսում Նախ՝ The Pierpont Morgan Library, New York (4 May-7 August,1994) եւ ապա The Walters Art Gallery, Baltimore (28 August-23 October,1994) գրադարաններում: Երեւում է, որ այս ցուցադրումներից անմիջապէս յետոյ Ջ. Պոլ Գետտիի թանգարանը գնում է պատառիկները սեփականատիրոջից անձնական պայմանագրով (1976թ. երբ Ջ. Պոլ Գետտի կտակը բացեցին, յայտաբերեցին, որ նա 700 միլիոն դոլլար էր կտակել իր

Թանգարանին):

Հազիւ ստանձնել էի Բրիտանական Գրադարանի Արեւելեան Զրիստոնեական բաժանմունքի աւանդապահութիւնը (Curatorship), երբ միտնուցի մի վերադարձման (restitution) պահանջքի հարցի մէջ՝ Եթովպիայի կառավարութեան կողմից: 1867թ. երբ անգլիական կառավարութիւնը մի արշաւանք կազմակերպեց Եթովպիայի Թեոդորոս կայսրի դէմ, անգլիական բանակին ուղեկցում էին մի քանի մասնագետներ, որոնց պարտականութիւնն էր հաւաքել Բրիտանական Թանգարանի համար մշակոյթի նմուշներ՝ այդ թուով ձեռագրեր: Պատերազմի նախօրեակին Թեոդորոս կայսրը կուտակել էր աւելի քան 10,000 ձեռագրեր վանքերից՝ զարդարելու համար այն եկեղեցին, որը նուիրուելու էր «Աշխարհի Ամենափրկչի» պատուին կառուցուելիք Մագդալայի բերդում: Երբ անգլիական բանակը գրաւեց Մագդալայի բերդը, Թեոդորոս կայսրը ինքնասպանութիւն գործեց, իսկ անգլիական բանակը թալանեց Մագդալայի մատենադարանի 7,000-ի մօտ ձեռագրեր: 1868թ. Օգոստոսի 28-ին այդ հաւաքածոյի 350 լաւագոյն ձեռագրերը յանձնուեցին Բրիտանական Թանգարանին: Այս պատկառելի հաւաքածոյի այլ մասունքներ մաս են կազմում Windsor Palace արքայական պալատի գրադարանի, Բողլէեան գրադարանի, Կեմբրիջի Համալսարանի: Ողջ հավաքածոյից միայն մի ձեռագիր Վիկտորիա թագուհին վերադարձրեց Եթովպիայի Յովհաննես Կայսրին՝ վերջինիս խնդրանքով: Դա Kebra Negast (Glory of the Kings) -ը հատորն էր, որի վրայ նորընծայ թագաւորները կատարում էին իրենց հաւատարմութեան ուխտը : Եթովպական կառավարութիւնն իր Լոնդոնի դեսպանատան միջոցով բազմաթիւ անգամներ պահանջեց ձեռագրերի վերադարձը՝ ականաւոր Եթովպագետների հովանաւորութեամբ, բայց ամէն անգամ գրադարանը առանց որեւէ երկմտանքի մերժեց: Պահանջքների մի դրական արդիւնքն այն եղաւ, որ ես հաւաքածոն դարձրի աւելի մատչելի ընթերցողներին, լաւագոյն նմուշների միկրոֆիլմերը տրամադրուեցին ազգային գրադարանին Ադիս Աբեբայում, եւ ամենայատկանշականը՝ քաջալերեցի ձեռագրերի ցուցադրումը միջազգային ցուցահանդեսներում՝ առանց վախի, որ դրանց վերադարձը Լոնդոն Եթովպական Պետութիւնը կարող էր իրաւաբանական գետնի վրայ արգիլել: Մինչեւ 1868թ. այդ ձեռագրերը երբեք չէին ցուցադրուել: Դրանք առաջին անգամ ցուցադրուեցին 'The Christian Orient' (1978) ցուցահանդեսում՝ քոյր եկեղեցիներին (Հայերէն, Ղպտերէն, Ասորերէն) առընթակից: Այս ցուցահանդեսի համար Մայր Աթոռի աջակցութեամբ Լոնդոն բերուեց 1225թ. մի հոյակապ խաչքար, որը յետոյ նուիրուեց Բրիտանական Թանգարանին: Այս առաջին ցուցահանդեսից յետոյ 1993 թ. տեղի ունեցաւ 'African Zion: The Sacred Art of Ethiopia' ցուցահանդեսը Բոլթիմորում, իսկ 2001թ. Փարիզում եւ ապա Ջերոնիայում 'L'Arche Ethiopienne. Art Chretien D'Ethiopie': Այս համագործակցութիւնը բարելաւեց յարաբերութիւնները երկու հաստատութիւնների միջեւ, թէեւ ոչ մի գրաւական չկայ, որ ձեռագրերը վերադարձնելու պահանջքը կ'անհետանայ: Մի բան պարզ է, որ աշխարհի բոլոր թանգարանները եւ գրադարանները յամառօրէն հետեւում են միանման քաղաքականութեան, որն է՝ ոչ մի դէպքում տեղի

չտալ մշակութային գանձերի վերադարձի պահանջքներին:

Ձ. Պոլ Գետտիի Թանգարանի դեմ ծախսալից դատական գործողութիւնը, ետ վերցնելու համար Թորոս Ռոսլինի կողմից մանրանկարուած պատառիկները, երբեք պիտի չյաջողուէր յօգուտ Արեւմտեան Թեմի Առաջնորդարանին: Դա արկածախնդիր, չմտածուած գործողութիւն էր, որը ոչ մի պատիւ չբերեց հայ ժողովրդին: Մենք կարիքը չունենք Ձ. Պոլ Գետտիի տնօրէնութեան հաստատումին, որ պատառիկները հայ մանրանկարիչ Թորոս Ռոսլինին են պատկանում եւ հետեւաբար հայ մշակոյթի մասնիկներ են: Սա պետք է համարել առաջին անփորձ մօտեցումը մշակութային մի մասունքի վերականգնումի 'restitution'՝ բոլորովին չփաստուած եւ անհիմն պատճառաբանութիւնների հիման վրա: Յիշեցնենք թէ՛ առաջին յաջող, առանց որեւէ թատերականութեան, մշակութային գանձի վերադարձը տեղի ունեցաւ 2011 թ., երբ Թորոս Ռոսլինի ձեռքով 1272 թ. մանրանկարուած «Կեռան Թագուհու Աւետարանից» պոկուած երկու մանրանկարները վերադարձուեցին Երուսաղէմ եւ Ներդրուեցին ձեռագրի մէջ՝ շնորհիւ մեր անաղմուկ ջանքերին եւ յոյն սեփականատիրոջ վեհանձն վերաբերմունքին :

«Որ յամենայն ժամ ուսանին եւ երբեք ի գիտութիւն ճշմարտութեան ոչ հասանեն» (Բ Տիմ Գ .7)

